

ԳԼՈՒԽ IV

Կ. ՄԵԼԻՔ-ՇԱԽՆԱԳԱՐՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Ինչպես մեր անցյալի հեղինակներից շատերի՝ Արովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Շահագիգի, Աղայանի, Պռոշյանի, այնպես էլ Կ.Մելիք-Շահնագարյանի համար գրականությունը և մանկավարժությունը մի անրաժանելի միասնություն են կազմել. ավելին, մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա գրել է մանուկների համար և զգալի վաստակ ունի մանկական գրականության ասպարեզում: 1888թ. Շուշիի Չայոց հոգևոր տեսչության տպարանում լույս է տեսնում մանուկներին հասցեագրված նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Փշրանք», որի ջերմ ընդունելությունը, հավանաբար, սլետք է բացատրել նրանով, որ մանկական գրականությունը բերող ճանապարհի Կ.Մելիք-Շահնագարյանն անցել է դպրոցով: 1889թ. Լևոն Սարգսյանը ողջունում է Կ. Մելիք-Շահնագարյանի գրքույկը՝ նկատելով, որ մանուկների համար գրված արձակ ու չափածո էջերը ցավալիորեն հոգսաշատ են: Ի հակակշիռ դրանց՝ գրախոսը մատնանշում է նաև «հետաքրքիր, կենդանի ու ընկալան Ծնով գրված» այնպիսի գործեր, ինչպիսիք են՝ «Գիշերապահ Լկոյի երազը», «Եվրոպայի և Կովկասի անրան անասունները» և այլն¹: «Փշրանքի» հեղինակը փշրանք առ փշրանք ի սր բերելով՝ իր մանկական գործերը ամփոփում է չափածո և արձակ մի քանի ժողովածուներում, ի շարս որոնց հիշատակության է արժանի «Փնջիկը»² (նվեր մանուկներին): Մանկական ստեղծագործությունների այս փունջը ևս, որը գրված է գրական հայերենով, իսկապես համակված է հոգսերով, և դա հասկանալի է, որովհետև իր «աչքի լույս»

հայրենակրցներն էլ հոգսերից ու ցավերից անմասն չեն: «Դարրին», «Լվացարար», «Երկրագործ», «Այգեպան», «Ամպեր», «Կովերն ու հորթերը», «Գլուղացու վշտերից» ոտանավորների վերնագրերն իսկ վկայում են, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջ է քաշում իր դաստիարակության պահանջները: Եվ մանկագիրն իր մեջ ուժ է գտնում նկարագրելու ոչ միայն չքավոր մարդկանց թշվառությունն ու «հացի խնդիրը», այլև աշխատանքի ռերկրանքը.

*Ցանում ես ցորեն, կորեկ ու զարի,
Բրինձ ու բամբակ ամենայն տարի,
Օլում, ծաղկում են ծակտիդ քրտինքով,
Քո վարած դաշտը, որ լի էր փշով:*

(«Երկրագործ»)³

Կ. Մելիք-Շահնագարյանի արծարծած թեմաները երեխաների ընկալումներին հոգեհարազատ են, որովհետև դժվար թե երեխաները կարողանան անհաղորդ մնալ այն ցավին, որն ամբողջ ընտանիքին է պատել, ինչու էլ. նաև գյուղին.

*Երկինքը կապտած մնաց շաբաթներ,
Խանձվեցին արտեր, մարգեր չորացան,
Ծառի տերևներ տակից կտրված՝
Թոշնած, թոռոմած գետին թափվեցան:*

(«Գլուղացու վշտերից»)⁴

Այո՛, գլուղացու բախտը կախված է ոչ միայն տերերից, բոնավորներից, կեղեքիչներից, այլև ընությունից՝ երաշտից, կարկուտից, տավարախտից, մորեխից: Որքան էլ դառնացած է մանկագիրը, այնուամենայնիվ, Վարուժանի «Չացին երգի» ստեղծարար սերմնացանին հիշեցնող նրա քնարական հերոսը հոգու ամբողջ

¹ «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1889, № 12, էջ 1981:

² Մելիք-Շահնագարյան Կ. Կ., Փնջիկ, Բագու, 1907:

³ Մելիք-Շահնագարյան Կ. Կ., Փնջիկ, Բագու, 1907, էջ 8:

⁴ Անդ, էջ 29:

ջերմությամբ զգում է աճող ցորենի շարժումն ու աշխատանքի քաղցրությունը, արտերի մեջ ծփացող ցորենի ալիքվող խաղը.

*Անցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր
Լցվում, ծածկում են քո սիրուն արտեր,
Քամին փչում է, արտը տատանում,
Կարծես նոր հարս է հորանց է գնում:*

(«Երկրագործ») ⁵

Եվ այս ամենին հաջորդում է լավատեսությունը: Մանուկ ընթերցողը տեսնում է, թե ինչպես «ցրտաշունչ ձմռանը խրճիթում նստած»⁶ հողի մշակը իր խոփն է սրում՝ լավագույն կյանքի ընդհանր նորից թողնելով հաջորդ տարվան.

*Արոր ու գութան սարքում, պատրաստում
Ու գարնան գալուն նորից սպասում:*⁶

Այս գրքույկի ոտանավորների գերակշռող մասը՝ «Շերամի որդը», «Մեղուններ», «Օիծեռնակ» և այլն, փոքրիկ ընթերցողներին սովորեցնում է աշխատասիրություն, հոգատարություն, եամրերություն և ուսուցողական, իմացական, դաստիարակչական նշանակություն ունի: Այսպես՝ մեկ-երկու բանաստեղծության ընթերցանությամբ երեխան մանրամասն տեղեկություններ է ստանում՝ շերամի որդից մետաքսյա գործվածք կամ էլ մեղունների ժրաջան աշխատանքի շնորհիվ մեղք ստանալու մասին: Մանկական ոտանավորներով Կ.Մելիք-Շահնագարյանը մանուկներին ու պատանիներին ուսուցանում է անհրաժեշտ գիտելիքներ՝ թռչունների, կենդանիների և բույսերի խնամքի վերաբերյալ, նրանց մատաղ հոգիներում սերմանում բարեգործության և քրիստոնեական ոգորմածության գաղափարներ.

*Ողորմացեք պարոններ,
Հացի կարոտ աշուղիս,
Ողորմացեք տիկիներ
Կույր ու անձար աղքատիս:*

(«Աշուղ») ⁷

«Հացից կարոտ մնալու» տևական գանգատին Մելիք-Շահնագարյանը հակադրում է մարդասիրության գաղափարը, որն էլ դառնում է նրա մանկական ստեղծագործությունների աիբակալ մոտիվը: «Մոր օրորը» ուտանավորում «իր անմեղ գառնուկին, սրտի միակ միսիթարին» անվերապահորեն նվիրված աշխատավոր գեղջուկին պատմում է իր անխնդում կյանքի, նյութական ու հոգեկան ծանր վիճակի, «բախտից իրեն հասած սև օրերի մասին»: Մայրը պայծառ է պատկերացնում որդու ապագան՝ եավատալով, որ նա «մի օր կսրբե իր արցունքները».

*Ննջիր, սիրուն իմ մանկիկ,
Իմ աղավնյակ, աչքիս լույս,
Քանի օրոր քեզ կերգես,
Ննջիր մորդ վերջին հույս ⁸:*

«Մոր օրորը» գերծ չլինելով հոգսի, կարիքի, պակաս-պռառի ճնշումից, առլեցուն է գործվագութ մոր՝ որդու ապագայի խոստումնալից համադրություններով:

1877-1880 թթ. ընթացքում Կ.Մելիք-Շահնագարյանը մանկական դրամատիկական և արձակ գործերի մի ամբողջ շարք է գրում (մեծ մասը մնացել է ձեռագիր վիճակում), որոնց դաստիարակչական նշանակությունը անուրանալի է. «Գող սիրտը դող...»⁹ - մեկ գործողությամբ մանկական վոդևիլ, «Կռվան կավածատերը»¹⁰ - մեկ գործողությամբ կիսնդիա (իբական կյանքից), «Թռչունների մեջ»¹¹ (փոխադրություն ֆրանսերենից), «Լիլի կամ հակինթ խաչ» (Սև անտառի պատմությունը)¹² (թարգմանություն ռուսերենից), «Փոքրիկ նվագածու կամ Սոցարտի մանկությունը»¹³, «Աշխատանքի օր անտառում. Սրբյուններ»¹⁴, էմիլ Տիբոյից փոխադրում է «Ծերուկ այգեպանի պատմությունը և ըացատրությունը»¹⁵, որը մանուկներին փո-

⁵ Անդ, էջ 10:

⁶ Անդ:

⁷ Մելիք-Շահնագարյան Կ. Կ., նշվ. աշխ., էջ 5:

⁸ Անդ, էջ 34:

⁹ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 32:

¹⁰ Անդ, գ. 33:

¹¹ Անդ, գ. 72:

¹² Անդ, գ. 66:

¹³ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 64:

¹⁴ Անդ, գ. 67:

¹⁵ Անդ, գ. 56:

խանցում է բնագիտական որոշակի գիտելիքներ:

Ռուսերենից կատարած «Անուղղելի ծույլ Պետրոսը» փոխադրության մեջ, նկատի ունենալով իրեն ունկնդիր լսարանը մանկագիրը դատապարտում է երախտամոռությունը, ծուլությունը և պատվիրում է երեխաներին այդ ախտից հեռու տալու: «Ծուլություն սիրողի փորը միշտ քաղցած, շորը պատռած և մարմինը տկար կլինի: Ատեցեք ծուլությունը, սիրեցեք աշխատությունը. աշխատող ձեռքը երբեք քաղցած չի մնալ»¹⁶: 1884թ. գրած «Մեր բարերարները»¹⁷ հոդվածում Կ.Մելիք-Շահնազարյանը արժեքավիրում է Մ.Մաշտոցի արարած հայերեն այբուբենի նշանակությունը և պատանիներին պատմում է Եվուպայի առաջին գյուտարար-տպագրիչ Յոհան Գուտենբերգի մասին, ում պատկանում է տպագրական ողջ գործընթացի մշակման առաջնության պատիվը: Տարական դասարանների երեխաների համար ուսուցողական առումով ուշագրավ է ռուսերենից թարգմանած Ա.Բարտոյի «Համարող թխսկանը»¹⁸ գրույցը: Ձուգահեռ նկարագրվող երկու հավ մայրիկների՝ Չալատուրիների և Թավմազիկի ճուտիկների գրույցը, ուսուցանում է գումարում և հանում տասնի սահմաններում:

1895թ. հոկտեմբերի 17-ի թվակիր նամակում Ելիզավետպոլից (Գանձակ) Աղասի Թառխանյանը Կ.Մելիք-Շահնազարյանին հիշեցնում է Թիֆլիսում մանկական փոխադրությունների մասին ունեցած իրենց գրույցի մասին և ընդգծելով դրանց կարևորությունը երեխաների դաստիարակության գործում՝ վստահություն է հայտնում, որ վիրջինս իրեն կաջակցի և եթե արդեն պատրաստ ու խմբագրված գործեր ունի, միջից լավագույնը կընտրի և կուղարկի իրեն¹⁹:

Մանկապատանեկան տարիքի ընթերցողների համար դաստիարակչական մեծ նշանակություն են ունեցել 1934 - 35թթ. «Պիոներ կանչում» տպագրված «Նյութեր սփռնեական խա-

րույկի մոտ կարդալու համար» փոխադրություններն ու թարգմանությունները: Հետաքրքիր է Կառլ Եվալդի «Յասամանի թուփը»²⁰ գրույցը, ուր յասամանի արմատը ճյուղերին, տերևներին և ապա ծաղիկներին մեղադրում է անգործության մեջ. իսկ վերջիններս նրան հանդիմանում են. որ չի կարելի լինել եսասեր և աչառու, որովհետև իրենք ամենքը մի մեծ տնտեսություն են կազմում, որի մեջ յուրաքանչյուրն իր գործն է կատարում: 1935թ. Կ.Մելիք-Շահնազարյանը շարունակում է տպագրել Կ.Եվալդի «Բնագիտական շարքի»²¹ թարգմանությունը՝ պատանի ընթերցողների մեջ սերմանելով բարի զգացումներ՝ հայրենի հողի, շրջապատող աշխարհի. բնության ու աշխատանքի նկատմամբ:

Տարիներ շարունակ Կ.Մելիք-Շահնազարյանը, ինչպես արդեն ասվել է, ակտիվորեն աշխատակցել է Տիգրան Նազարյանի պատկերագրող «Աղբյուր» ամսագրին: 1917թ., երբ նշվում էր ամսագրի գրական-հասարակական գործունեության 35-ամյակը, «Աղբյուրն» իրավացիորեն զնահատում է նաև Կ. Մելիք-Շահնազարյանի գրական վաստակը. «Ահա «Աղբյուրի» մի կենարար ջինջ ու բյուրեղ ակն, որ 35 անընդհատ տարիներ ջրել, ոռոգել է մանկական անդաստանը: Հեզ իբրև գարնանաբույր մանուշակ, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը, գիտնականին հատուկ համեստությամբ, ամբողջալից ծափերից ազատ մեր արդի ակամավոր մանկական գրողն է...»²²:

Կ.Մելիք-Շահնազարյանը բավական շնորհակալ աշխատանք է կատարել թարգմանական գրականության ասպարեզում: Հատկապես ուշագրավ են մատաղ սերնդի համար նախատեսված նրա թարգմանություններն ու փոխադրությունները: Սակայն միայն մանկապատանեկան տարիքի ընթերցողներին չէր հասցեագրված նրա թարգմանական գործունեությունը: Բարոյական չափանիշների վերազնահատման ուղեծրում պետք է որոնել Կարամզինի «Թշվառ

¹⁶ Անդ, գ. 71:

¹⁷ Անդ, գ. 76:

¹⁸ Անդ, գ. 68:

¹⁹ Անդ, գ. 135:

²⁰ «Պիոներ կանչ», շաբաթաթերթ, Երևան, 1934, № 35:

²¹ «Պիոներ կանչ», շաբաթաթերթ, Երևան, 1935, №№ 16, 17, 19, 20:

²² «Աղբյուր», 1917, մայիս-հունիս, էջ 89:

Լիզայի»²³ (1877) և «Բաղոյական մարդը»²⁴ (1879) ստեղծագործությունների թարգմանությունները և կարելի է միայն ամսուսանք հայտնել, որ ժամանակաշրջանի համար կարևորություն ներկայացնող և սահուն զրույց հայերենով թարգմանված այս գործերը ցայսօր մնացել են ձեռագիր վիճակում: 1907-1910թթ. էջմիածնում Մելիք-Շահնազարյանը թարգմանում է գերմանացի մեծ ռանաստեղծ Յոհան Վոլֆգանգ Գյոթեի՝ իշխանավորների ու ընտանիքի հոգևոր դասի կամայականությունները քննադատող «Ռայնեքե Աղվես»²⁵ (1793) պոեմը: Ընտրությունը չի կարելի ընտելանալ պատահական շարժառիթներով, որովհետև լինելով քրիստոնեական րարոյականության քարոզիչ՝ Կ.Մելիք-Շահնազարյանին հարազատ է ընտելանալ դաստիարակության միջոցով հասարակության վերափոխման գաղափարը: Տպագրության միջոց չունենալով՝ նա չի կարողացել հրատարակել «Ռայնեքե Աղվես» պոեմի թարգմանությունը, որն, իսկապես, երկար նախապատմություն ունի: 1932թ. Գյոթեի մահվան հարյուրամյակի կապակցությամբ Կ.Մելիք-Շահնազարյանի թարգմանության ձեռագիրը ձեռքից ձեռք է անցնում: Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի ռաժմի վարչի Գ.Զուբարը իր տեղեկանքով²⁶ հավանություն է տալիս թարգմանությանը, գրաքննիչ Գառնիկ Ղազարյանը հետևյալ գրավոր տեղեկանքով եզրակացնում է. «Գլավլիտը կարդալով և ծանոթանալով ընկ. Կ.Մելիք-Շահնազարյանի Գյոթեի «Ռայնեքե Աղվես» թարգմանությանը, որը կատարել է ոուս հայտնի զրոյ Ղոստոնակու ռավական հաջող թարգմանությունից, գտնում է միանգամայն արժեքավոր գործ և վերին աստիճանի հաջողված թարգմանություն»²⁷: Ժամանակի նշանավոր գրական գործիչներից Գ.Լևոնյանը, Ս.Կանայանը, Թոթովենցը ընթերցում և արժեքավորում են այն՝ մատաղ սերնդի դաստիարակության տեսանկյունից, սակայն ձեռագիրը վերադարձվում է տիրոջը՝ ֆինանսական միջոցների ռացակայության

պատճառարանությամբ: Այնուհետև Պետերատի դասականների պատանեկան ռաժմի վարիչ Արամ Դայրիյանը, հավանելով ձեռագիրը, պամանադիր է կնքում Կ.Մելիք-Շահնազարյանի հետ և ձեռագիրը եանծնում խմրագիրներին: Ավելի քան յոթ ամիս պահելով, առանց խմրագրական միջամտությունների, ձեռագիրը վերադարձվում է հեղինակին՝ կասկածի տակ առնելով թարգմանության լեզվի որակը, ոչ ընագրից թարգմանված լինելու հանգամանքը և որ իրըն ձեռագրին ծանոթացած Ա.Տարոնցին որոշել է հրատարակել «Ռայնեքե Աղվեսի» իր թարգմանությունը: Այդ առիթով Կ.Մելիք-Շահնազարյանը դիմում է ժողդատարան, կուսկենտկոմի մամուլի ռաժմին՝ ռացահայտելով, որ Տարոնցին գերմաներենի իր թույլ իմացությամբ չէր կարող թարգմանել այդպիսի սր դասական ստեղծագործություն և պահանջում է պարզություն մտցնել խմրի մեջ: Ի վերջո, Տարոնցին այդ ամենը համարում է թյուրիմացություն, իսկ Կ.Մելիք-Շահնազարյանի թարգմանությունը այդպես էլ մնում է անտիպ: Ներկայացնում ենք մի հատված նշված ստեղծագործության՝ Մելիք-Շահնազարյանի թարգմանությունից, որի լեզուն ոչ միայն հաջողված է և մատչելի, այլև արդիական.

*Վա՛յ այն տերության,
Որտեղ իշխողը էշերն են լինում:
Որքան էլ նրանք անխելք չլինեն
Եվ անընդունակ վարչական մասում,
Բայց դարձյալ իրենց անծնական շահը
Աշխարհն էլ քանդվի, ձեռքից չեն քողնում:
Փոքրիկ գողերին կախում են նրանք,
Որ մեծ գողերին շատ բաժին մնա:
Այժմ Ռայնեքեն մեծ հոչակ ունի:
Թող ամեն մեկը, խելք, իմաստության
Չարգը ճանաչե: Թող ամեն մեկը
Չարիքից փախչե և բարեգործի
Անուն վաստակե, մեր երգի իմաստը
Չենց դրա մեջ է՝²⁸:*

Մեծ հետաքրքրությունների տեղ մտավորական է եղել Կ.Մելիք-Շահնազարյանը: Գյուղատնտես-գրողը մամուլի միջոցով մերթ օգտակար խորհուրդներ էր տալիս ռույսերի խմամքի,

²³ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.57:

²⁴ Անդ, գ.60:

²⁵ Անդ, գ.55:

²⁶ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.55:

²⁷ Անդ:

²⁸ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 55, թթ 97,130:

հողային աշխատանքների կատարման, ցան-
քատարածությունների մշակման և ընդհանրա-
պես, այգիների բարձր բերքատվության մասին,
մերթ գողտրիկ պատմվածքներ ու չափածո
գործեր էր նվիրում մանուկներին, մերթ էլ սար-
կազմի ազդեցիկ ուժով ջրի երես էր հանում
ժամանակի ու միջավայրի աղտոտությունները,

որոնք, բնականաբար, խանգարում էին հաս-
րակության առաջընթացին: Թերևս անպատեհ է
գնահատության խոսքն ավարտել ավսոսանքի
տոնայնությամբ, ուստի հուսանք, որ Կոնստա-
նդին Սելիք-Շահնազարյանի ստեղծագործու-
թյունները կվերահրատարակվեն և հետայսու
իրենց արժանի գնահատությունը կստանան
մեր գրականագիտության մեջ: